

5.2. Ժողովրդագրական իրավիճակը

ՀՀ վարչատարածքային բաժանման համար հիմք է հանդիսացել 1995թ. դեկտեմբերի 4-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքը¹, ըստ որի ՀՀ տարածքը բաժանված է 11 մարզերի, ներառյալ Երևան քաղաքը մարզի կարգավիճակով (12 թաղային համայնքներով), 48 քաղաքային և 866 գյուղական համայնքների:

ՀՀ վարչատարածքային բաժանումը 2008թ. հունվարի 1-ի դրությամբ, ըստ մարզերի

	Համայնքների թիվը			
	ընդամենը	քաղաքային	թաղային	գյուղական
Հայաստանի Հանրապետություն	926	48	12	866
ք. Երևան	12	-	12	-
Արագածոտն	114	3	-	111
Արարատ	97	4	-	93
Արմավիր	97	3	-	94
Գեղարքունիք	92	5	-	87
Լոռի	113	8	-	105
Կոտայք	67	7	-	60
Շիրակ	119	3	-	116
Սյունիք	109	7	-	102
Վայոց ձոր	44	3	-	41
Տավուշ	62	5	-	57

2008թ. հունվարի 1-ի դրությամբ, ՀՀ մշտական բնակչության թվաքանակի ցուցանիշն ընթացիկ հաշվառմամբ կազմել է 3229.9 հազ. մարդ, այդ թվում քաղաքայինը՝ 2069.3 հազ. մարդ և գյուղականը՝ 1160.6 հազ. մարդ:

ՀՀ մշտական բնակչության թվաքանակն ըստ մարզերի, հունվարի 1-ի դրությամբ

(1000 մարդ)

	Ընդամենը		Քաղաքային		Գյուղական	
	2007թ.	2008թ.	2007թ.	2008թ.	2007թ.	2008թ.
Հայաստանի Հանրապետություն	3222.9	3229.9	2065.9	2069.3	1157.0	1160.6
ք. Երևան	1104.9	1107.8	1104.9	1107.8	0	0
Արագածոտն	140.0	140.3	33.0	33.0	107.0	107.3
Արարատ	275.1	276.6	81.0	81.5	194.1	195.1
Արմավիր	280.2	281.6	99.6	100.2	180.6	181.4
Գեղարքունիք	239.6	240.1	79.6	79.5	160.0	160.6
Լոռի	282.7	282.0	166.1	165.6	116.6	116.4
Կոտայք	276.2	277.8	155.1	155.8	121.1	122.0
Շիրակ	281.3	281.0	170.9	170.3	110.4	110.7
Սյունիք	152.9	152.8	103.7	103.7	49.2	49.1
Վայոց ձոր	55.8	55.8	19.4	19.3	36.4	36.5
Տավուշ	134.2	134.1	52.6	52.6	81.6	81.5

¹ Ներառյալ «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին՝ 14.12.2004թ. ՀՕ-41-Ն և 13.06.2006թ. ՀՕ-147-Ն ընդունած ՀՀ օրենքները:


5. ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

2007թ. հունվար-դեկտեմբերին հանրապետությունում գրանցված բնակչության բնական հավելաճի¹ և միգրացիայի մնացորդի² ազդեցությամբ ՀՀ մշտական բնակչության թվաքանակի ցուցանիշը, տարեսկզբի նկատմամբ աճել է 7.0 հազ.մարդով, իսկ 2006թ. հունվարի 1-ի նկատմամբ՝ 10.7 հազ.մարդով:

2007թ. հունվար-դեկտեմբերին՝ 2006թ. հունվար-դեկտեմբերի համեմատ ՀՀ մշտական բնակչության թվաքանակի շարունակվող աճն ապահովվել է ի հաշիվ բնակչության բնական հավելաճի ավելացման (25.9%) և միգրացիայի մնացորդի բացասական ցուցանիշի նվազման (8.5%):

Բնակչության միգրացիայի բացասական մնացորդի փոխարինումը բնական հավելաճով, 2004-2007թթ. հունվար-դեկտեմբերին

(%)



2007թ. հունվար-դեկտեմբերին արձանագրվել է 40142 ծնված, որը 2006թ. նույն ժամանակաշրջանի համեմատ աճել է 6.7%-ով, իսկ ծնելիության ընդհանուր գործակիցը, 1000 բնակչի հաշվով, համապատասխանաբար, աճել է 0.7 պրոմիլային կետով և կազմել 12.4 ‰:

ՀՀ բնակչության բնական շարժի հիմնական ցուցանիշները հունվար-դեկտեմբերին

(մարդ)

	Բացարձակ թվաքանակ, մարդ		1000 բնակչի հաշվով, պրոմիլ	
	2006 թ.	2007 թ.	2006 թ.	2007 թ.
Ծնվածներ <i>այդ թվում՝</i>	37639	40142	11.7	12.4
տղա	20025	21435	12.9	13.7
աղջիկ	17614	18707	10.6	11.2
Մահացածներ <i>այդ թվում՝</i>	27202	27004	8.5	8.4
տղամարդ	14125	14548	9.1	9.3
կին	13077	12456	7.9	7.5
Մահացածներից՝ մինչև 1 տարեկան հասակում <i>այդ թվում՝</i>	523	429	13.9³	10.7³
տղա	315	259	15.7	12.0
աղջիկ	208	170	11.8	9.2
Բնական հավելաճ	10437	13138	3.2	4.0
Ամուսնություններ	16887	18145	5.2	5.6
Ամուսնալուծություններ	2797	2931	0.9	0.9

¹ ՀՀ արդարադատության նախարարության Քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային բաժինների կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն:

² ՀՀ կառավարության առընթեր ՀՀ ոստիկանության տարածքային անձնագրային բաժինների կողմից տրամադրված տվյալների համաձայն:

³ 1000 կենդանի ծնվածի հաշվով:


5. ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

2007թ. հունվար-դեկտեմբերին արձանագրվել է մեռելածնության 558 դեպք, որը 2006թ. հունվար-դեկտեմբերին արձանագրված մեռելածնության դեպքերի համեմատ նվազել է 15.7%-ով (662 դեպք):

2007թ. հունվար-դեկտեմբերին արձանագրվել է 27004 մահացության դեպք կամ 2006թ. համապատասխան ժամանակաշրջանի համեմատ մահվան դեպքերը նվազել են 0.7%-ով: Մահացության ընդհանուր գործակիցը, 1000 բնակչի հաշվով, 2007թ. հունվար-դեկտեմբերին կազմել է 8.4‰` 2006թ. հունվար-դեկտեմբերի համեմատ նվազելով 0.1 պրոմիլային կետով:

2007թ. հունվար-դեկտեմբերին ծնվածների թվաքանակը 1.5 անգամ գերազանցել է մահացության դեպքերը:

Ծնվածների և մահացածների բացարձակ թվաքանակն ըստ գրացման ամիսների



Բնական հավելաճի գործակիցը, 1000 բնակչի հաշվով, 2007թ. հունվար-դեկտեմբերին կազմել է 4.0‰ և 2006թ. հունվար-դեկտեմբերի համեմատ աճել 0.8 պրոմիլային կետով:

2007թ. հունվար-դեկտեմբերին հանրապետության և մարզերի կտրվածքով առկա է բնակչության բնական հավելաճի ցուցանիշ, սակայն առանձին տարածաշրջանների` մասնավորապես, ՀՀ Լոռու մարզի Թումանյանի քաղաքային և գյուղական, Ստեփանավանի, ՀՀ Գեղարքունիքի մարզի` Կրասնոսելսկի, ՀՀ Սյունիքի մարզի Կապանի և Մեղրու տարածաշրջանների գյուղական բնակավայրերում, ՀՀ Տավուշի մարզի` Տաուշի տարածաշրջանի գյուղական բնակավայրերում արձանագրվել են բնակչության բնական նվազման ցուցանիշներ (մահերը գերազանցել են ծնունդներին):

ՀՀ բնակչության բնական շարժի հիմնական ցուցանիշներն ըստ մարզերի, 2007թ. հունվար-դեկտեմբերին

	Ծնվածներ	Մահացածներ	այդ թվում` 0-1 տարեկան մահացածներ	Բնական հավելաճ	Ամուսնություններ	Ամուսնալուծություններ
Հայաստանի Հանրապետություն	40142	27004	429	13138	18145	2931
ք. Երևան	13436	8826	93	4610	6578	1238
Արագածոտն	1856	1212	15	644	807	92
Արարատ	3541	2119	30	1422	1401	182
Արմավիր	3591	2132	41	1459	1750	154

5. ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

	Ծնվածներ	Մահացածներ	այդ թվում՝ 0-1 տարեկան մահացածներ	Բնական հավելաճ	Անուսնություններ	Անուսնալուծություններ
Գեղարքունիք	3129	1791	28	1338	1556	136
Լոռի	3182	2919	48	263	1380	384
Կոտայք	3791	2212	54	1579	1671	221
Շիրակ	3504	2671	75	833	1311	266
Սյունիք	1751	1261	22	490	700	133
Վայոց ձոր	685	479	2	206	274	51
Տավուշ	1676	1382	21	294	717	74

(1000 բնակչի հաշվով)

	Ծնվածներ	Մահացածներ	այդ թվում՝ 0-1 տարեկան մահացածներ ¹	Բնական հավելաճ	Անուսնություններ	Անուսնալուծություններ
Հայաստանի Հանրապետություն	12.4	8.4	10.7	4.0	5.6	0.9
ք. Երևան	12.1	8.0	6.9	4.1	5.9	1.1
Արագածոտն	13.2	8.6	8.1	4.6	5.8	0.7
Արարատ	12.8	7.7	8.5	5.1	5.1	0.7
Արմավիր	12.8	7.6	11.4	5.2	6.2	0.5
Գեղարքունիք	13.0	7.5	8.9	5.5	6.5	0.6
Լոռի	11.3	10.3	15.1	1.0	4.9	1.4
Կոտայք	13.7	8.0	14.2	5.7	6.0	0.8
Շիրակ	12.5	9.5	21.4	3.0	4.7	0.9
Սյունիք	11.5	8.3	12.6	3.2	4.6	0.9
Վայոց ձոր	12.3	8.6	2.9	3.7	4.9	0.9
Տավուշ	12.5	10.3	12.5	2.2	5.3	0.6

2007թ. հունվար-դեկտեմբերին 2006թ. նույն ժամանակաշրջանի համեմատ մահացության պատճառական կառուցվածքում արձանագրվել է արյան շրջանառության համակարգի (0.2 տոկոսային կետով), նորագոյացություններից (0.5 տոկոսային կետով) և այլ հիվանդություններից (0.6 տոկոսային կետով) մահվան դեպքերի տեսակարար կշիռների աճ, իսկ դժբախտ պատահարներից, թունավորումներից և վնասվածքներից (0.2 տոկոսային կետով), մարսողական օրգանների (0.6 տոկոսային կետով) և վարակային ու մակարուծային հիվանդություններից (0.1 տոկոսային կետով) մահվան դեպքերի տեսակարար կշիռների նվազում:

Մահացությունն ըստ պատճառների

(ՀՀ արդարադատության նախարարության ՔԿԱԳ տարածքային բաժիններից ստացված մահվան վերաբերյալ ակտերի համաձայն)

	2006թ. հունվար-դեկտեմբեր, մարդ	Ընդհանուրի նկատմամբ, %	2007թ. հունվար-դեկտեմբեր, մարդ	Ընդհանուրի նկատմամբ, %
Մահացածների թվաքանակը	27202	100	27004	100
<i>դրանցից՝ ըստ պատճառների.</i>				
արյան շրջանառության համակարգի հիվանդություններից	13587	49.9	13540	50.1
դժբախտ պատահարներից, թունավորումներից և վնասվածքներից	1323	4.9	1271	4.7
նորագոյացություններից	5188	19.1	5279	19.6
շնչառական օրգանների հիվանդություններից	2008	7.4	1894	7.0
մարսողական օրգանների հիվանդություններից	1561	5.7	1371	5.1
վարակային և մակարուծային հիվանդություններից	271	1.0	239	0.9
այլ հիվանդություններից	3264	12.0	3410	12.6

¹ 1000 կենդանի ծնվածի հաշվով :


5. ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

2007թ. հունվար-դեկտեմբերին արձանագրվել է 0-1 տարեկան երեխաների մահվան դեպքերի 18.0%-ով նվազում 2006թ. հունվար-դեկտեմբերի համեմատ, իսկ մանկական մահացության գործակիցը, 1000 կենդանի ծնվածի հաշվով, կազմել է 10.7%՝ 2006թ. նույն ժամանակաշրջանի 13.9%-ի դիմաց: Հաշվետու ժամանակաշրջանում արձանագրված 0-1 տարեկան մահվան դեպքերի կառուցվածքում 76.2%-ը կազմել են շուրջճնական շրջանում առաջացած առանձին վիճակներից, բնածին անկանոնություններից և ձևախախտումային խանգարումներով պայմանավորված մահվան դեպքերը, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանում արձանագրված՝ 79.9%-ի համեմատ:

2007թ. հունվար- դեկտեմբերին հանրապետությունում արձանագրվել է 0-4 տարեկան երեխաների 494 մահվան դեպք, որի կառուցվածքում՝ մինչև 1 տարեկանների մահվան դեպքերը կազմել են 86.8%: Մինչև 5 տարեկան երեխաների մահացության գործակիցը (1000 կենդանի ծնվածի հաշվով) կազմել է 12.3%, տղա երեխաների համար՝ 13.4%, իսկ աղջիկ երեխաների համար՝ 11.0 %:

Հղիության հետ կապված բարդություններից, ծննդյան և ետծննդյան ժամանակահատվածում, 2007թ. հունվար-դեկտեմբերին գրանցվել է մայրական մահացության 6 դեպք, որով պայմանավորված, մայրական մահացության գործակիցը կազմել է 15.0 (100000 կենդանածնի հաշվով):

2007թ. հունվար-դեկտեմբերին 7.4%-ով աճել են գրանցված ամուսնությունները և կազմել 18145 դեպք, իսկ ամուսնության ընդհանուր գործակիցը, 1000 բնակչի հաշվով, 2006թ. հունվար-դեկտեմբերի համեմատ աճել է 0.4 պրոմիլային կետով և կազմել 5.6%: 2007թ. հունվար-դեկտեմբերին ամուսնալուծության դեպքերն աճել են 4.8%-ով և կազմել 2931, իսկ ամուսնալուծության ընդհանուր գործակիցը 1000 բնակչի հաշվով պահպանվել է նույն մակարդակի վրա և կազմել 0.9%:



Հանրապետությունում 2007թ. հունվար-դեկտեմբերին 1000 գրանցված ամուսնական զույգերի համեմատ արձանագրվել է ամուսնալուծության 162 դեպք՝ 2006թ. հունվար- դեկտեմբերի 166-ի համեմատ:

5. ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

Ամուսնալուծությունները 1000 ամուսնությունների հաշվով,
ըստ մարզերի, հունվար-դեկտեմբերին

	ք.երևան	Արագածոտն	Արարատ	Արմավիր	Գեղարքունիք	Լոռի	Կոտայք	Շիրակ	Սյունիք	Վայոց ձոր	Տավուշ
2006 թ.	209	149	124	89	80	267	139	136	150	231	136
2007թ.	188	114	130	88	87	278	132	203	190	186	103

ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության տարածքային անձնագրային բաժինների տրամադրած տեղեկատվության վիճակագրական մշակման արդյունքում (ըստ եկողի վիճակագրական հաշվառման կտրոն՝ ձև թիվ 19-ի և ըստ մեկնողի վիճակագրական հաշվառման կտրոն՝ ձև թիվ 20-ի) արձանագրվել են հետևյալ ցուցանիշները.¹

ՀՀ միգրացիոն իրավիճակի ընդհանուր բնութագիրը հունվար-դեկտեմբերին

	2006թ.		2007թ.	
	մարդ	1000 բնակչի հաշվով	մարդ	1000 բնակչի հաշվով
Ընդամենը՝				
եկողներ		9126	9673	3.0
մեկնողներ		15844	15817	4.9
միգրացիայի մնացորդ (+, -)		-6718	-6144	-1.9

ՀՀ տարածքային կառավարման նախարարության Միգրացիոն գործակալության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն, 2007թ. հունվար-դեկտեմբերին ՀՀ սահմանային անցման կետերով իրականացվող արտաքին ուղևորաշրջանառության համախառն ծավալը կազմել է 2643.9 հազ.ուղևորություն: Ուղևորափոխադրումների հաշվեկշիռը (ժամանումների և մեկնումների տարբերությունը) կազմել է -2.9 հազ., 2006թ. նույն ժամանակաշրջանում արձանագրված՝ 21.7 հազ.-ի համեմատ:

Հայաստան ժամանումների և Հայաստանից մեկնումների ծավալն
ըստ տրանսպորտային միջոցների, հունվար-դեկտեմբերին

(1000 ուղևորություն)

	Ընդամենը			այդ թվում՝ ըստ տրանսպորտային միջոցների								
				օդային			ավտոմոբիլային			երկաթուղային		
	ժամանում	մեկնում	տարբերություն	ժամանում	մեկնում	տարբերություն	ժամանում	մեկնում	տարբերություն	ժամանում	մեկնում	տարբերություն
2006 թ.	983.7	962.0	21.7	586.8	585.3	1.5	375.1	354.4	20.7	21.8	22.3	-0.5
2007թ.	1320.5	1323.4	-2.9	695.9	710.0	-14.1	601.9	590.0	11.9	22.7	23.4	-0.7

¹ Ներառյալ ներքին տեղաշարժերը: